

ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ
ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՌՈՐԴ ԴԱՐԸ

Գիտաժողովի զեկուցումների
ժողովածու

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2017

ՀՏԴ 94(479,25):06
ԳՄԴ 63.3 (5Հ)
Հ 282

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները
ֆինանսավորող համահայկական հիմնադրամի
հովանավորությամբ

Ժողովածուն հրատարակվում է
ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գ.Ա. Պողոսյան**

Հ 282 Հայոց նորագույն պետականության քառորդ դարը. գիտաժողովի
զեկուցումների ժողովածու. Եր.: «Գիտություն» հրատ., 2017: 204 էջ:

Գրքում զետեղված են Հայաստանի Հանրապետության 25-ամյակին
նվիրված հանրապետական գիտաժողովի (2016թ. հուլիսի 15) զեկուցումները:

ՀՏԴ 94(479,25):06
ԳՄԴ 63.3 (5Հ)

ISBN 978-5-8080-1275-2

© ՀՀ «Գիտություն» հրատարակչություն, 2017

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՄ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՄԱՆՀԻՆԳԱՄՅԱ ՌԻՂԻՆ**

Էդիկ Մինասյան

*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան,*

Անկախ պետականության հաստատումը կամ վերականգնումը ամեն մի ժողովրդի բաղձալի ցանկությունն է, երազանքը: Հայ ժողովուրդը իր բազմադարյա պատմության ընթացքում բազմիցս կորցրել ու վերականգնել է իր պետականությունը: Այդպես եղավ նաև 20-րդ դարավերջին, երբ ստեղծվեց Հայաստանի Երրորդ Հանրապետությունը: Այն ոչ միայն ստեղծվեց Հայաստանի Առաջին (1918-1920) և Երկրորդ (1920-1991) Հանրապետությունների հիմքի վրա, այլև դարձավ նրանց ժառանգորդն ու իրավահաջորդը:

Գոյատևելով շուրջ 2.5 տարի՝ Հայաստանի Առաջին Հանրապետությունը դրեց նորագույն շրջանի հայոց պետականության հիմքերը՝ փաստորեն ապահովելով նրա թեկուզ և անկատար տեսքով գոյությունը՝ ի դեմս Խորհրդային Հայաստանի: ԽՍՀՄ կազմում Խորհրդային Հայաստանը նշանակալի նվաճումների հասավ հասարակական և տնտեսական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, ունեցավ զարգացած արդյունաբերություն և մշակույթ, սակայն չունեի և չէր կարող ունենալ քաղաքականապես ու տնտեսապես անկախ ազգային պետություն ու պետականություն: 1980-ական թթ. վերջերին և 1990-ական թթ. սկզբին ԽՍՀՄ-ում տեղի ունեցած քաղաքական բուռն զարգացումների արդյունքում կազմավորվեց այդ երկիրը, և Հայաստանը, ի թիվս նախկին խորհրդային մյուս հանրապետությունների, անկախացավ, որի իրավական ձևակերպումը տրվեց 1991թ. սեպտեմբերի 21-ի համաժողովրդական հանրաքվեի արդյունքներով¹:

1980-ական թվականների երկրորդ կեսը ճակատագրական ժամանակաշրջան հանդիսացավ Խորհրդային Միության համար: Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը, որը խոստանում էր դեմոկրատացնել հասարակությունը, ձերբազատել

¹ Տե՛ս Է. Մինասյան, Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, 2013, էջ 8:

այն անցյալի սխալներից ու թերություններից՝ փաստորեն ոչինչ չտվեց: Երկրում հատկապես սրվեց ազգային հարցը, ուժեղացան հանրապետությունների անջատողական ձգտումները: Կենտրոնի անձարակության պատճառով փաստորեն ստեղծվեց քաղաքական անկառավարելի իրավիճակ: Օգտվելով այդ վիճակից՝ հատկապես միութենական հանրապետությունները փորձեցին անկախանալ: Անկախացման ուղին բռնեցին մերձբալթյան հանրապետությունները, Վրաստանը, Ուկրաինան, ավելի ուշ՝ Հայաստանի Հանրապետությունը, որը կաշկանդված էր Արցախյան խնդրով: Այդ ամենին գումարվեց 1988թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժը՝ իր աղետալի հետևանքներով: Սոցիալական, բնապահպանական, լեզվամշակութային, ժողովրդավարական ու այլ հիմնահարցեր լծողվեցին արցախյան ազատագրական շարժմանը:

Արցախի հարցում, մի կողմից ԽՍՀՄ ղեկավարության միտումնավոր քաղաքականության, մյուս կողմից, հանրապետության կուսակցական ղեկավարության, չափից ավելի զգուշավոր գործունեության հետևանքով հայ ժողովուրդը կորցրեց հավատը կոմունիստական կուսակցության հանդեպ: Դրա հետ մեկտեղ լայն թափ ստացած, ազգային շահերի իրականացմանն ուղղված ժողովրդավարական շարժումը վայելում էր ժողովրդական զանգվածների վստահությունը: Այդ ամենը հանգեցրեց հանրապետության քաղաքական կյանքի արմատական ու շրջադարձային փոփոխությունների: Դրանք սկզբնավորվեցին Հայաստանի գերագույն խորհրդի 1990թ. մայիսի 20-ի և հունիսի 3-ի ընտրություններով, որոնք տեղի ունեցան մեծամասնական ընտրակարգով:

1990թ. մայիսի 20-ին, անցած 70 տարում Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին Գերագույն խորհրդի այլընտրանքային ընտրություններ, որին մասնակցեց նաև Արցախի բնակչությունը²: Ընտրական պայքարը հիմնականում ընթացավ Հայոց համազգային շարժման և Հայաստանի կոմունիստական կուսակցության միջև: Ընտրություններում ձայները բաժանվեցին ՀՀԾ-ի և Հայաստանի կոմկուսի ներկայացուցիչների միջև: 1990թ. օգոստոսի 4-ին հանրապետությունում նորընտիր խորհրդարանը Հայաստանի

² Ռ. Ազիզբեկյան, Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Երևան, 1992, էջ 38:

Գերագույն խորհրդի նախագահ ընտրեց ՀՀՇ վարչության նախագահ, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանին: Դրանով վերջ տրվեց կոմկուսի մենիշխանության յոթանասունամյա շրջանին:

Հայաստանի նորընտիր իշխանությունները ձեռնամուխ եղան ազգային անկախ պետականության ստեղծմանը: 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, երկարատև ու հանգամանակից քննարկումից հետո, ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը, որով դրվեց անկախացման գործընթացի սկիզբը³:

Հռչակագիրը կարևոր իրավական փաստաթուղթ էր դեպի անկախություն տանող ճանապարհին: Այն բաղկացած էր 12 կետից և նախանշում էր Հայաստանի Հանրապետության քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման ուղիները:

Հռչակագրի քաղաքական բաժնում նշվում էր, որ ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն (կրճատ՝ Հայաստան, այսինքն՝ այնպես, ինչպես հանրապետությունը կոչվել է 1918թ.:

Հռչակագրի հատուկ հոդվածով հաստատվում էր հանրապետության օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների նկատմամբ: Եթե ԽՍՀՄ տվյալ օրենքը չէր հաստատված Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից, ապա այն չէր կարող գործել հանրապետությունում: 1990թ. օգոստոսի 24-ին պետական դրոշ հաստատվեց եռագույնը՝ կարմիր, կապույտ, նարնջագույն, որն առաջին Հանրապետության դրոշն էր: Այնուհետև 1992թ. ապրիլի 19-ին ընդունվեց նոր պետականության մյուս խորհրդանիշը՝ զինանշանը, որը նույնպես առաջին հանրապետության խորհրդանիշն էր⁴:

Հայաստանը պետք է վարեր ակտիվ արտաքին քաղաքականություն, ունենար իր դիվանագիտական ներկայացուցչությունները տարբեր երկրներում:

Փաստաթղթի տնտեսական բաժնում նշվում էր, որ Հայաստանի տարածքում հողը, նրա ընդերքը, ձեռնարկությունները համարվում են հայ ժողովրդի սեփականությունը: Երկրի տնտեսության հիմքում պետք է ընկած լինեն մասնավոր սեփականատիրական և ազատ

³ «Խորհրդային Հայաստան», 24 օգոստոսի, 1990:

⁴ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 13 (993), 15.07.1991, էջ 75-76:

շուկայական հարաբերությունները: Հողը, իբրև մասնավոր սեփականություն, պետք է տրվեր գյուղացուն: Ձեռնարկությունների մի մասը ենթակա էր սեփականաշնորհման:

Հատուկ կետով արձանագրվում էր, որ Հայաստանը պետք է ունենա իր մասնաբաժինը ԽՍՀՄ զինված ուժերի միջոցներից: ՀՀ-ն պետք է ունենա սեփական դրամական համակարգը:

Մշակութային բաժնում հատուկ ուշադրություն էր հատկացվում հայերենի, իբրև պետական լեզվի կիրառման հարցին: Հանրապետությունում ներքին ամբողջ գործավարությունը պետք է կատարվեր միայն հայերենով:

Հոշակագիրն արտոնում էր մարդու իրավունքների հարգում, խղճի, կուսակցությունների, ժողովների, մամուլի ազատություն:

1915թ. հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը սատարելու վերաբերյալ հողված մտցվեց: Մինչև նոր սահմանադրության՝ հիմնական օրենքի ընդունումը հոշակագիրը ծառայում էր իբրև ծրագրային փաստաթուղթ: Հոշակագիրը միաժամանակ դարձավ ազգային օրենսդրության և նոր Սահմանադրության ստեղծման հիմքը: Անկասկած այդ փոփոխությունները խաթարում էին խորհրդային սահմանադրության ամբողջականությունն ու ներքին տրամաբանությունը, քանի որ իրավաբանորեն հստակ համապատասխանում էր ամբողջատիրության պահանջներին՝ կոմկուսին ընձեռելով իշխանության անսահմանափակ հնարավորություններ:

Հայաստանի նկատմամբ կենտրոնի վարած ահաբեկչական քաղաքականության անընդհատ սաստկացումը բացատրվում էր կայսրության փլուզումն ամեն գնով կասեցնելու ձգտումով, քանի որ մեր հանրապետությունն ընթանում էր անկախացման ճանապարհով: Պատահական չէր, որ Հայաստանի Հանրապետությունը մերձբալթյան հանրապետությունների, Վրաստանի և Մոլդովայի հետ միասին չմասնակցեց կենտրոնի նախաձեռնությամբ ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ 1991թ. մարտի 17-ին անցկացված համամիութենական հանրաքվեին՝ այն որակելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին հակասող:

Ելնելով Հայաստանի անկախության մասին հոշակագրի դրույթներից ու նպատակներից՝ կենտրոնից ձերբազատվելու և ազգի շահերից բխող քաղաքականություն վարելու նպատակով, Հայաստանի Գերագույն խորհուրդը նույն թվականի մարտի 1-ին

որոշեց 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և անկախանալու վերաբերյալ: 1991 թվականի սեպտեմբերի 21-ին հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությունը, այսինքն՝ 2 մլն 43 հազար մարդ (կամ քվեարկության իրավունք ունեցողների 94,39 տոկոսը) «այո» ասաց անկախությանը⁵ Հանրաքվեի արդյունքների հիման վրա 1991թ. սեպտեմբերի 23-ին Հանրապետության Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն⁶: 70-ամյա ընդմիջումից հետո կրկին վերականգնվեց Հայաստանի անկախությունը:

Հայաստանում նախ ստեղծվեց խորհրդարանական հանրապետություն, ապա նախկին խորհրդային հանրապետությունների օրինակով մտցվեց նախագահական (պրեզիդենտական) կառավարման համակարգ: Հետևելով օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման վերաբերյալ Անկախության մասին հռչակագրի դրույթներին՝ ՀՀ Գերագույն խորհուրդը 1991թ. հունիսի 25-ին հիմնեց նախագահի պաշտոնը⁷: Արդեն ստեղծված նոր օրենսդրությամբ 1991թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահական այլընտրանքային ընտրություններ՝ վեց թեկնածուների մասնակցությամբ: Չայների ճնշող մեծամասնությամբ (83 տոկոս) հանրապետության առաջին նախագահ ընտրվեց ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, իսկ փոխնախագահ՝ Գագիկ Հարությունյանը⁸:

Անկախության ուղին բռնած հանրապետությանը ծանր փորձություններ էին սպասում: Այն, փաստորեն, կտրվել էր նախկին տնտեսական համակարգի բոլոր օղակներից: 1991թ. նոյեմբերին հերթական անգամ փակվեց Ադրբեջանից եկող գազամուղը: Սկսվեց Հայաստանի էներգետիկ շրջափակումը, որը գնալով ավելի մեծ չափեր ընդունեց: Դադարեցին գործելուց հանրապետության գրեթե բոլոր ձեռնարկությունները և ընդհատվեցին պարապմունքները ուսումնական հաստատություններում, բնակչությունը զրկվեց

⁵ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 18 (998), 30.09.1991, էջ 21

⁶ Նույն տեղում:

⁷ ՀԱԱ (Հայաստանի ազգային արխիվ), ֆ. 113, ց. 165, գ. 415,թ. 42:

⁸ «Հայաստանի Հանրապետություն», 12.11.1991:

ջեռուցումից: Գազամուղի փակումից բացի շուտով ընդհատվեց նաև երկաթուղային կապը: Հայաստանի տնտեսությունը կանգնեց կազմալուծման լուրջ վտանգի առաջ: Օրըստօրե ծանրանում էր ազգաբնակչության սոցիալական վիճակը: Տարածաշրջանում լարվածությունը գնալով ավելի էր սրվում:

Հանրապետության համար այսպիսի ծանր պայմաններում 1991թ. դեկտեմբերի 8-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկի մոտակայքի Բելովեժսկ բնակավայրում երեք սլավոնական հանրապետությունների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի դեկավարները ստորագրեցին համաձայնագիր ԽՍՀՄ-ի գոյությունը դադարեցնելու մասին՝ որպես միջազգային սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն: Միաժամանակ հայտարարվեց միջազգային համագործակցության նոր սուբյեկտի՝ Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) կազմավորման մասին⁹: Միութենական նախկին հանրապետություններից Մինսկի համաձայնագրին առաջինն արձագանքեց Հայաստանի Հանրապետությանը, որը ողջունեց ԱՊՀ-ի ստեղծումը, հայտնեց նրան միանալու իր պատրաստակամությունը:

1991թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի այն ժամանակվա մայրաքաղաք Ալմա-Աթայում (այժմ մայրաքաղաքը տեղափոխվել է Աստանա) 11 ինքնիշխան պետություններ՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը, Ղրղըզստանը, Թուրքմենստանը, Ադրբեջանը, Մոլդովան և Հայաստանը ստորագրեցին համաձայնագիր՝ ԱՊՀ ստեղծման մասին: Ավելի ուշ ԱՊՀ կազմի մեջ մտավ Կրաստանը: Դրանով իրականացավ ԽՍՀՄ-ի փլուզումը: Այլևս գոյություն չունեցող երկրի նախագահ Միխայիլ Գորբաչովին մնում էր հրաժարական տալ¹⁰: Անկախ պետության հռչակումից և հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանը թևակոխեց զարգացման նոր փուլ, պետականության կայացման ու ամրապնդման շրջանը:

Անկախության հռչակումից կարճ ժամանակ անց ՀՀ-ն ստացավ համընդհանուր միջազգային ճանաչում: 1991թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետությունը ճանաչեցին ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Կանադան, Ռումինիան և այլ պետություններ: 1992թ. մարտի 2-ին ՀՀ-ն

⁹ «Հայաստանի Հանրապետություն», 24.12.1991:

¹⁰ «Հայաստանի Հանրապետություն», 2.03.1994:

դարձավ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ-ի) լիիրավ անդամ, իսկ 2001թ. հունվարի 25-ին՝ Եվրախորհրդի անդամ: Ճանաչմանը հաջորդեց դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Հայաստանի Հանրապետության հետ: Այսօր ՄԱԿ-ի անդամ 193 պետություններից ՀՀ դիվանագիտական հարաբերություններ ունի մոտ 160 պետության հետ, ինչը Հայաստանի կարևորության և բարձր հեղինակության վկայությունն է: Եվ եթե դրան ավելացնենք, որ Հայաստանը դեսպանությունների մակարդակով դիվանագիտական ներկայացուցիչներ ունի աշխարհի մոտ 60 պետությունում, իսկ 30-ից ավելի պետություններ դեսպանություններ են բացել Երևանում¹¹, ապա պատկերն ավելի ամբողջական և տպավորիչ կդառնա: Լիտվան առաջինը հաստատեց հայաստանի հանրապետության հետ դիվանագիտական հարաբերություններ (1991թ. Նոյեմբերի 21-ին)¹²: Հայաստանի հարևաններից Վրաստանն առաջին երկիրն էր աշխարհում, որը ճանաչել է ՀՀ-ի անկախությունը՝ 1991թ. հուլիսի 27-ին¹³: Թուրքիան Հայաստանի անկախությունը ճանաչել է 1991 դեկտեմբերի 24-ին¹⁴, Իրանը՝ 1991թ. դեկտեմբերի 25-ին¹⁵, իսկ Ադրբեջանը մինչև օրս չի ճանաչել: Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ դեսպանությունների մակարդակով հաստատել են միայն Վրաստանը և Իրանը, իսկ Թուրքիան և Ադրբեջանը՝ ոչ: Դեռ ավելին, նրանք երկուսն էլ փակել են Հայաստանի հետ իրենց սահմանները և նրան ենթարկել հաղորդակցային շրջափակման՝ Հայաստանին ներկայացնելով երկու նախապայման: Առաջին՝ հրաժարվել Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջից, և երկրորդ՝ ԼՂՀ-ն վերադարձնել Ադրբեջանի ենթակայությանը: Հայաստանը մերժում է երկու նախապայմաններն էլ և համարում, որ հարևան երկրների միջև պետք է հաստատվեն նորմալ հարաբերություններ, և վիճելի հարցերը պետք է լուծվեն խաղաղ ճանապարհով՝ խարսխված միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների վրա, ներառյալ ժողովրդի ինքնորոշման

¹¹ Տե՛ս, «Դիվանագիտական Բանբեր»: Հայաստանի արտաքին գործերի նախարարություն, Վենետիկ, 1993, էջ 4,5:

¹² Տե՛ս, նույն տեղում, էջ 5:

¹³ Տե՛ս, նույն տեղում, էջ 4 :

¹⁴ Տե՛ս , «Երկկողմ հարաբերություններ: Թուրքիա»: (<http://imfa.am/hy/country-by-cointry/tr>):

¹⁵ Տե՛ս, նույն տեղում:

իրավունքը¹⁶: Հայաստանը անդամ է մի շարք եվրոպական կառույցների, այդ թվում՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությանը (ԵԱՀԿ), որի մեջ մտնում են բոլոր եվրոպական երկրները, ԱՄՆ-ը և Կանադան, թվով 55 պետություն¹⁷, Եվրոպայի խորհրդին, որի կազմի մեջ մտնում են 47 պետություն: Հայաստանը 2004թ. մասնակցեց Եվրոմիության «Եվրոպական հարևանության քաղաքակրթությանը», որը նախապայմաններ է ստեղծում եվրոպական կառույցներին Հայաստանի ինտեգրման համար:

Հայաստանը դարձավ մի շարք այլ միջազգային կազմակերպությունների, ինչպես Առևտրի համաշխարհային կազմակերպության, Արժույթի միջազգային հիմնադրամի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Սնծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ և այլն:

2015թ. հունվարի 1-ին Հայաստանը մտավ Եվրասիական տնտեսական միության մեջ (ԵՏՄ) և Ռուսաստանի, Բելառուսի ու Ղազախստանի հետ դարձավ ԵՏՄ լիիրավ անդամ: Սակայն դա չէր նշանակում կապերը խզել Եվրոմիության հետ: ՀՀ-ի և Եվրամիության միջև բազմապիսի շփումները շարունակվում են: Ինչպես հայտարարեց ՀՀ ԱԳ նախարար Է. Նալբանդյանը. «Հաջողությամբ ավարտվել են ԵՄ-Հայաստան նոր շրջանակային համաձայնագրի վերաբերյալ բանակցությունների չորս փուլերը...Հույս ունենք մոտ ապագայում ավարտել բանակցությունները»¹⁸: Հայաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական տվյալների համաձայն՝ Հայաստանը տարբեր երկրների հետ ստորագրել է մոտ 2000 պայմանագիր և հուշագիր: Հայաստանը որպես պետություն, առաջին օրվանից հայտարարեց եվրոպական արժեքներին իր հավատարմության մասին, այսինքն՝ այնպիսի արժեքների, ինչպիսիք են ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը, քաղաքացիական

¹⁶ Ն. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետությունը կայացած արդիական պետություն է և միջազգային հանրության լիիրավ անդամ, «Հայկական բանակ», 3 (89), 2016, էջ 21:

¹⁷ Տե՛ս Հ. Քոթանջյան, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում: «Ռազմական անվտանգային հետազոտություններ», հ. 1, Երևան, 2014, էջ 59:

¹⁸ «Новое время», 6 сентября 2016 г.

հասարակությունը և մարդու իրավունքների հարգումը: Հայաստանի հեղինակության մեծացմանը և միջազգային դիրքերի ամրապնդմանը նպաստեց նաև այն, որ միջազգային հանրությունը ճանաչեց Հայաստանին որպես քրիստոնեությունը առաջինը պետական պաշտոնական կրոն հռչակած պետություն, որի 1700-ամյակը մեծ շուքով նշվեց 2001թ.: Այս առումով մեծ նշանակություն ունեցավ նաև 2016թ. հունիսին Հռոմի Ֆրանցիսկոս 1-ին պապի կատարած այցելությունը Հայաստանի Հանրապետություն, որը նա բնութագրեց որպես «ուխտագնացություն քրիստոնեությունը աշխարհում առաջինը պետական կրոն հռչակած երկիր՝ Հայաստան»¹⁹:

Հայաստանի հանրապետությունը իրականացնելով անկախ և ինքնիշխան պետության իր կարգավիճակը, կամքը և հաստատակամությունը, դարձել է արդի միջազգային հանրության լիիրավ և գործունյա անդամ, որը Հայաստանի արդիական պետություն դառնալու ամենակարևոր վկայություններից մեկն է:

Սկսվեց հայոց անկախ հանրապետության պետական շինարարությունը: Նախկին խորհրդային համակարգից ժառանգած պետական գործառույթների մեծ ծավալը հնարավոր չէր սեփական ուժերով լիովին ֆինանսավորել: Անցումային այս դժվարին փուլում հարկավոր էր ստեղծել նախկինից էապես տարբեր պետական կառավարման միանգամայն նոր համակարգ, որը պետք է նպատակաուղղված լիներ երկրի տնտեսության վերականգնմանը, անկախ պետականության ամրապնդմանը, բնակչության անկում ապրած կենսամակարդակի բարձրացման ու հասարակական հարաբերությունների կայուն զարգացման ապահովմանը:

ՀՀ-ի անկախացումից հետո հրամայական էր դարձել իշխանության նոր մարմինների ձևավորումը: Այդ գործընթացը սկսվել էր դեռևս 1990թ. մայիսին կայացած Գերագույն խորհրդի ընտրություններից հետո: Այդ ժամանակ խորհուրդների իշխանությունից անցում կատարվեց դեպի խորհրդարանական հանրապետություն, բայց որոշ ժամանակ անց երկրում մտցվեց նախագահական կառավարում: Պետական կառավարման նոր համակարգի ձևավորման համար հանրապետությունում ընդունվեցին մի շարք օրենքներ: Հարկավոր էր ամրապնդել պետական կարգը: ՀՀ «Անկախ պետության հիմնադրությունների մասին»

¹⁹ Տե՛ս Ն. Հովհաննիսյան, Երեք օր, որ ցնցեց աշխարհը: «Ազգ», 2016, հուլիսի 1:

սահմանադրական նոր օրենքով հաստատվում էր իշխանության պետական կարգը, ապահովվում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը²⁰:

1990-ական թվականների սկզբից սկսած իրականացվել են գործող նախարարությունների կառուցվածքային բազմաթիվ փոփոխություններ, որոնք հաճախ բացասական հետևանքներ են ունեցել: Կառուցվածքային հաճախակի փոփոխությունները պայմանավորված էին գործադիր մարմինների խնդիրների ու լիազորությունների ոչ հստակ տարանջատմամբ, աշխատողների ուռճացված քանակով:

Հանրապետության պետական-քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից էր պետության հիմնական օրենքի՝ ՀՀ Սահմանադրության ընդունումը: Քանի որ գործող սահմանադրությունը հակասում էր Անկախության մասին հռչակագրի սկզբունքներին, ուստի ՀՀ խորհրդարանը ստիպված էր անընդհատ կատարել սահմանադրական փոփոխություններ ու շտկումներ:

Ակնհայտ էր, որ միայն փոփոխություններով հնարավոր չէր ստեղծել նոր սահմանադրություն: Ուստի այդ պատճառով 1990թ. նոյեմբերի 15-ին ստեղծվեց սահմանադրական հանձնաժողով, որի վրա դրվեց նոր Սահմանադրության նախագծի մշակման կարևոր խնդիրը՝ Սահմանադրության մշակված տարբերակը Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հավանությանն արժանանալուց հետո, 1995թ. հուլիսի 5-ին դրվեց համաժողովրդական հանրաքվեի²¹:

Նոր սահմանադրությունը, իր թերություններով հանդերձ, կարևոր երևույթ էր: Այն դրեց ամբողջատիրական համակարգից դեպի ժողովրդավար պետության անցնելու իրավական հիմքը:

Սկսեցին ձևավորվել պետաիրավական նոր կառույցներ: ՀՀ Սահմանադրությունը նախատեսում էր նախագահական հանրապետության մոդելը՝ գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների տարանջատումով:

Բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, վերանվանվեց Ազգային ժողով:

²⁰ Է. Մինայան, նշված աշխ., էջ 137:

²¹ Հ. Խաչատրյան, Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրություն, Երևան, 1997, էջ 23,24:

ՀՀ Սահմանադրությունը իրավական ձևակերպում տվեց քաղաքական նոր համակարգին, հռչակեց սեփականության բոլոր ձևերի հավասարություն, սահմանեց Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները: Ըստ սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրությամբ հաստատվեցին Հայաստանի երրորդ Հանրապետության խորհրդանիշները՝ դրոշը, զինանշանը և օրհներգը:

Հանրապետության կայացման տարիներին կատարված տեղաշարժերը անհրաժեշտ էին դարձնում սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնել:

Դրանցից էին ՀՀ Նախագահին ընձեռված բացառիկ մենաշնորհային լիազորությունների սահմանափակումը, ՀՀ Ազգային ժողովի կողմից գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության ուժեղացումը և այլն:

Նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքներից հետո 2005թ. նոյեմբերի 27-ին ընդունվեց ՀՀ Սահմանադրության բարեփոխված, նոր տարբերակը, իսկ 2016թ. դեկտեմբերի 6-ին՝ միանգամայն նորացված սահմանադրությունը, որով կառավարման կիսանախագահական համակարգից անցում է կատարվում խորհրդարանական համակարգին:

ՀՀ-ի տարածքային կառավարման կառուցվածքի բարելավման և տեղերում ինքնակառավարման խորացման նպատակին էին ծառայում 1995թ. դեկտեմբերին կատարված վարչատարածքային փոփոխությունները և նոր միավորումների՝ մարզերի ու համայնքների հիմնումը: Հանրապետության շուրջ չորս տասնյակի հասնող շրջանների միավորման միջոցով ստեղծվեցին 11 մարզեր՝ Արագածոտնի, Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռիի, Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի, Տավուշի, գումարած մարզի կարգավիճակ ստացած քաղաքամայր Երևանը, որը 2009 թվականից վերածվեց առանձին համայնքի: Մարզերը բաժանվեցին համայնքների:

Սկսվեց նոր դատական համակարգի կազմավորումը, որը հիմնականում ավարտվեց 1999 թվականին: Այդ ուղղությամբ կարևոր քայլ էր առաջին աստիճանի, վերաքննիչ, վճռաբեկ դատարանների, ինչպես նաև սահմանադրական, տնտեսական, վարչական և այլ դատարանների հիմնումը, դատախազության ՀՀ համակարգի վերափոխմանն ուղղված միջոցառումները: 1999թ. հունիսի 12-ին

ներդրվեց եռաստիճան դատական համակարգը, սկսեց գործել վերաքննության ինստիտուտը, որպիսին չէր եղել խորհրդային ժամանակաշրջանում: 2001թ. ստեղծվեց ՀՀ տնտեսական դատարանը: Ընդունվեցին ՀՀ քրեական, քաղաքացիական, վարչական նոր օրենսգրքերը: ՀՀ դատական օրենսգրքի ընդունմամբ դրվեց դատական նոր համակարգի հիմքը, որը գործում է 2008թ. հունվարի 1-ից: Դատական նոր համակարգում ընդգրկված առաջին ատյանի դատարաններն են՝ ընդհանուր իրավասության դատարանները և մասնագիտացված դատարանները՝ քաղաքացիական, քրեական, վարչական և այլն:

Անհրաժեշտ բարեփոխումներ իրականացվեցին նաև անվտանգության և ոստիկանության մարմիններում:

Կատարվեցին սահմանադրության և ժողովրդավարության ոգուն համապատասխան այլ բարեփոխություններ ևս:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակելուց հետո առաջնահերթ նշանակություն ստացավ ազգային պետության անվտանգության և անկախության պահպանումը, որի երաշխիքը կարող էր լինել միայն մարտունակ բանակը: Իր կարճատև պատմության ընթացքում հաղթահարելով պատերազմի ու բանակաշինության ծանրագույն փորձությունները՝ հայոց բանակը կոփվեց և դարձավ մեր անկախ պետականության կարևորագույն երաշխիքը:

1990թ. Անկախության հռչակագիրը, որով ազդարարվեց Հայաստանի փաստացի անկախությունը, նոր իրավական ու գործնական հեռանկարներ բացեց ազգային բանակի ստեղծման գործում: Նույն տարվա սեպտեմբերին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ հանրապետության ՆԳՄ (ՆԳՆ) կառույցում ստեղծվեց «Հատուկ գունդը»²²: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծվեց Նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության պետական կոմիտեն, որի հիմքի վրա քիչ ավելի ուշ ստեղծվեց Պաշտպանության նախարարությունը²³:

Առաջին իսկ օրերից Պաշտպանության կոմիտեն լծվեց բանակաշինության դժվարին աշխատանքին, քանի որ իրադրությունը ծայրաստիճան լարված էր: 1992-1993թթ. երկրապահ կամավորական

²² Ս. Օհանյան, Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Երևան, 2012, էջ 40, ՀԱԱ, ֆ. 113, ց. 163, գ. 406,թ. 8,9:

²³ Տե՛ս, ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 317,թ. 1, 2:

ջոկատների և բանակ զորակոչված զինակոչիկների միավորումով, ստեղծվեց շարժունակ և կարգապահ բանակ: 1992թ. հունվարի 28-ին կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշում՝ դրանով իսկ իրավաբանորեն ազդարարելով հայոց բանակի ստեղծումը²⁴: Քիչ ավելի ուշ հիմնվեց Պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ գլխավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժիններ: Նորաստեղծ պաշտպանության նախարարության ենթակայությանը հանձնվեցին ընդամենը ՆԳՆ պարեկա-պահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը, քաղաքացիական պաշտպանության գունդը և հանրապետական զինկոմիսարիատը: Հայոց բանակի ակունքներում կանգնած էին նաև դեռևս 1990թ. սեպտեմբերին կազմավորված Երևանի հատուկ գունդը և Արարատի, Գորիսի, Վարդենիսի, Իջևանի և Մեղրու ինքնապաշտպանական վաշտերը:

Հայկական զինված ուժերի կանոնավոր զորամիավորումները, զորատեսակները, սպայական կազմը, սպառազինությունը և ռազմական տեխնիկական ձևավորվեցին գերազանցապես խորհրդային բանակի հիմքի վրա, աճեց բանակի թվաքանակը:

Այս ամենի շնորհիվ հայոց նորաստեղծ բանակը 1992թ. սկսած՝ մասնակցելով պատերազմական լայնածավալ գործողություններին՝ կամավորական ջոկատների հետ միասին կրեց մեր առաջին ռազմական հաղթանակները: Նա իրեն փառքով պսակեց նաև հաջորդ տարիներին՝ պատերազմը հասցնելով իր հաղթական ավարտին:

Արդեն խաղաղ պայմաններում, նորաստեղծ բանակը, նրա հրամանատարական կազմը հնարավորություն ստացան լծվելու բանակաշինության գործին:

Բանակաշինության գործընթացն ընդգրկեց պաշտպանության համակարգի բոլոր ոլորտները՝ սկսած բանակային ենթակառուցվածքների ստեղծումից մինչև անհրաժեշտ օրենսդրական դաշտի ապահովումը:

Տարիների հետևողական աշխատանքի շնորհիվ բարձրացավ սպաների և զինվորների մարտական պատրաստվածության մակարդակը, բարելավվեց բարոյահոգեբանական մթնոլորտը, ամրապնդվեց կարգապահությունը:

²⁴ Նույն տեղում:

Քսանհինգամյա իր պատմության ընթացքում Հայաստանի զինված ուժերը ձևավորել են միջազգային ռազմական համագործակցության գործուն համակարգ:

Հայոց բանակի ստեղծման գործում մեծ է պաշտպանության նախարարներ Վազգեն Սարգսյանի, Վազգեն Մանուկյանի և Մերժ Սարգսյանի դերը: Բանակը աստիճանաբար զինվեց ժամանակակից ռազմական տեխնիկայով և ամուր պատվար դարձավ անկախության պաշտպանության գործում: Հայոց բանակը կազմավորվեց մեր անկախ պետականության վերականգնման գործընթացում և հանդիսացավ նրա ամենամեծ ձեռքբերումը: Լավ կազմակերպված հայոց բանակում ծառայելը դարձավ յուրաքանչյուր հայի ազգային նվիրվածության վկայականն ու պատվի գործը:

Հայոց բանակն աստիճանաբար զինվեց ժամանակակից ռազմական տեխնիկայով և ամուր պատվար դարձավ անկախության պաշտպանության գործում:

Հայաստանի Հանրապետությունը ևս անկախության հենց սկզբից, խորհրդային մյուս հանրապետությունների նման, կանգնեց համակարգային խորը բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտության փաստի առջև: Այդ բարեփոխումներն ընդգրկում էին հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտները՝ քաղաքական, տնտեսական, իրավական, սոցիալական, մշակութային, և իրենց բնույթով շատ մասշտաբային էին ու խորը:

Տնտեսապես արդարացված ու դեպի ժողովրդավարություն տանող ճանապարհին քիչ չէին բացթողումներն ու չօգտագործված հնարավորությունները, ձախողումներն ու անհաջողությունները: Հայաստանի Հանրապետությունը վերջին քսանհինգից ավելի տարիներին ունեցել է կտրուկ ելևէջներ: Սպիտակի աղետալի երկրաշարժից դեռ ուշքի չեկած՝ ռազմաքաղաքական հակամարտությունների հետևանքով նորանկախ երկիրը կանգնեց հաղորդակցության ուղիների ու տնտեսական շրջափակման ծանր իրողության առջև: Ավելին, տևական շրջափակման, սեփական էներգակիրների բացակայությամբ պայմանավորված էներգետիկ ճգնաժամի, արտաքին շուկային ինտեգրվելու տնտեսական քաղաքականության ուղենիշներով պարտադրված փոփոխությունների, նախկինում ձևավորված տնտեսական կապերի խզման հետևանքով խիստ վատթարացավ հանրապետության առանց այն էլ ծանր կացությունը, որն աստիճանաբար խորացավ սուբյեկտիվ

գործոնների ազդեցությամբ: 1990-1993թթ. տնտեսական բարեփոխումները մեծ թափ ստացան, նկատվեց մասնավոր առևտրի աշխուժացում: Մակայն դրան հաջորդեց անկումը՝ շրջափակման շարունակվող պատերազմի ու վարչական ապարատի վերահսկող մարմիններում վտանգավոր չափերի հասած կոռուպցիայի և կաշառակերության պատճառով²⁵: Հայաստանում հաստատվեց շուկայական տնտեսության վատթարագույն ասիական մոդելը: Տեղի ունեցավ հասարակության խիստ բևեռացում: Մի կողմից հարյուր հազարավոր մարդիկ ընկան աղքատության գիրկը, մյուս կողմից՝ առաջ եկան տանկյակ նորաթուխ մեծահարուստներ: Հազարավոր մարդիկ ստիպված արտագաղթի ճանապարհ ընտրեցին²⁶: Տնտեսական ոլորտում արևմուտքի դեղատոմսերով իրականացվող դեմոկրակական ռեֆորմը իրականում բերեց ոչ թե ազատ շուկայի ստեղծմանը, այլ տիպիկ ասիական հարաբերությունների զարգացման, որը բնորոշ է փոքր, քիչ զարգացած «բանանային» հանրապետություններին²⁷:

Նորանկախ հանրապետությունը որդեգրեց տնտեսակարգի փոփոխության քաղաքականություն՝ ուղղված ազատական տնտեսական հարաբերությունների ձևավորմանը: Երկար սպասված անկախությունն ու տնտեսական կյանքի ազատականացումը անհրաժեշտորեն առաջ բերեցին քաղաքական ու տնտեսական համակարգերի կտրուկ փոփոխություններ: Նման ծավալով ու ընդգրկմամբ բարեփոխումների իրականացումն աննախադեպ երևույթ էր ամբողջ աշխարհում, որևէ երկիր մինչ այդ չէր կանգնել այդպիսի խնդրի լուծման առջև, և հետևաբար բացակայում էր նաև համապատասխան փորձը: Իրավական-ժողովրդավարական պետություն ստեղծելու նպատակով իրականացվեցին քաղաքական այնպիսի կարևոր բարեփոխումներ, ինչպիսիք են բազմակուսակցության, խոսքի, մամուլի ազատության և քաղաքացիական հասարակությանը բնորոշ այլ ինստիտուտների ստեղծումն ու դրանց հետագա զարգացումը: Տնտեսական

²⁵ Տե՛ս, Գ. Պողոսյան, Հայաստանի Հանրապետության 25 տարին, -«Հայոց նորագույն պատմության քարտրդ դարը, Գիտաժողովի զեկուցումների դրույթներ, 2016թ. հուլիսի 15», Երևան, 2016, էջ 5:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

բարեփոխումների արդյունքում ձևավորվել են շուկայական հարաբերություններ, իրականացվել գների, արտաքին առևտրի, ազգային արժույթի կարգավորման ազատականացում, ստեղծվել են շուկայական նոր ինստիտուտներ՝ բանկային համակարգ, խորհրդատվական, ամուլիտորական, ապահովագրական ընկերություններ, արժեթղթերի և անշարժ գույքի շուկայում գործող կազմակերպություններ:

Պետական կառավարման համակարգի շարունակվող բարեփոխումների արդյունքում ձևավորվել են նոր ինստիտուտներ՝ մաքսային և հարկային մարմիններ, արժեթղթերի շուկան, հակամենաշնորհային գործունեությունը, սակագնային քաղաքականությունը, պետական գնումները, պետական ծառայության համակարգը կարգավորող հատուկ մարմիններ, պետական կառավարման մյուս ինստիտուտների գործունեությունը հարմարեցվում է շուկայական տնտեսության վարման պահանջներին: Գործում են քաղաքացիական և քրեական նոր օրենսգրքերը, ընդունվել են բյուջետային, հարկային, բանկային, մաքսային համակարգերը, ընկերությունների գործունեությունը և այլ խնդիրներ կարգավորող բազմաթիվ օրենքներ և օրենսդրական այլ ակտեր: Իրականացված սեփականաշնորհման արդյունքում ՀՆԱ-ի մեջ գերակշիռ մասը կազմում է մասնավոր սեկտորի բաժինը: Կառուցվածքային բարեփոխումները հաջողությամբ են ընթանում հատկապես էներգետիկայի ոլորտում: Քիչ թե շատ, որոշակի տատանումներով, պահպանվում է դրամի կայունությունը, բյուջեի պակասորդը և արժեզրկումը գտնվում են կառավարելի մակարդակի վրա:

Բարեփոխումները փոփոխակի հաջողությամբ ընթանում են սոցիալական ոլորտում, կրթության և առողջապահության բնագավառներում: «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենքների ընդունումը կարևոր նշանակություն ունեցավ կրթական համակարգի կարգավորման հարցերում:

Անկախության առաջին տարիներին անհրաժեշտություն առաջացավ մշակելու ազգային դպրոցի ստեղծման սկզբունքները: Դպրոցը պիտի ապահովեր աշակերտության դաստիարակությունը ազգային ոգով և կազմակերպեր ուսման գործընթացը գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա: Այդ ուղղությամբ որոշակի քայլեր ձեռնարկվեցին: Ուսուցումը դպրոցներում ազատվեց կոմունիստական գաղափարախոսական կապանքներից: Անկախության տարիներին աշխատանքներ տարվեցին կրթության բովանդակությունը

փոխելու ուղղությամբ: Մշակվեցին ինչպես հիմնական, այնպես էլ այլընտրանքային դասագրքեր: Նորություն էր կառավարության 1995թ. հունիսի 12-ի որոշումը ուսուցման նոր, եռաստիճան համակարգին անցնելու մասին, բակլավրիատ՝ ոչ լրիվ բարձրագույն կրթությամբ, մագիստրատուրա (2 տարի)՝ բարձր որակավորման մասնագետների պատրաստում և ասպիրանտուրա: 1995թ. մի շարք բուհեր, իսկ 2005թ. գրեթե բոլոր բուհերը անցել են այդ համակարգին: Փորձեր են ձեռնարկվում նաև բուհերի ինքնուրույնությունն ընդլայնելու ուղղությամբ: Ամրապնդվում է հանրապետության բուհերի համագործակցությունը արտասահմանյան ուսումնական և գիտական հաստատությունների հետ: Այս ամենն իր արտացոլումն է գտել բարձրագույն կրթության մասին նոր օրենքում:

Ընտանեկան նպաստի համակարգի ներդրումն, իր թերություններով հանդերձ, կարևոր քայլ էր սոցիալապես անապահով խավերին աջակցելու տեսանկյունից: Զգալի ներդրումներ են կատարվում արտադրական ենթակառուցների ճյուղերում՝ հիմնականում վարկերի և նվիրատվությունների տեսքով, աղետի գոտու վերականգնման, էներգետիկայի, ավտոճանապարհների, ոռոգման և խմելու ջրի, կապի համակարգերի զարգացման և արդիականացման ուղղությամբ: Մասնավոր, այդ թվում՝ օտարերկրյա ներդրումներ են կատարվում արդյունաբերության (լեռնամետալուրգիական, քիմիական, դեղագործական, թանկարժեք մետաղների և քարերի մշակման, սննդի, թեթև արդյունաբերության ճյուղերում և այլն), ծառայությունների (առևտուր, ֆինանսական ծառայություններ, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ) և այլ ոլորտներում:

Հասարակական, մշակութային հարաբերությունների դաշտը, որը չափազանց կարևոր է քաղաքացիական հասարակության ու իրավական-ժողովրդավարական պետության կայացման տեսանկյունից, նույնպես ենթարկվել է արմատական փոփոխությունների: Մի կողմից, աստիճանաբար ներթափանցում ու ամրագրվում են արևմտյան արժեքները, մյուս կողմից՝ շարունակվում են արտահայտված մնալ խորհրդային շրջանում ձևավորված բազմաթիվ իրողություններ: Առկա են նաև ազգային արժեքների վերաիմաստավորման գործընթացներ: ՀՀ-ում անկախության հռչակումից հետո վերացվեցին գաղափարական կապանքները, որոնք կաշկանդում էին ազգային մշակույթի զարգացումը: Ստեղծվեցին ազատ ստեղծագործելու մեծ հնարավորություններ: Քաղաքական հարաբերություններում ժողովրդական նորամուծություններն էլ

ավելի էին ամրապնդվում: Խոսքի և մամուլի ազատությունը դրա լավագույն վկայությունն է: Անկախության ձեռքբերումներից ամենագլխավորը պատերազմում տարած հաղթանակն էր ու արցախի ազատագրումը, որը ձեռք բերվեց մեր ժողովրդի զավակների մարտական սխրագործությունների, մեծ զրկանքների ու կյանքի գնով: Կարևոր ձեռքբերում պետք է համարել ազատագրված Արցախի անկախ պետականության հաստատումն ու կայացումը:

Այն կայացած պետություն է իր բոլոր կառույցներով: Նույնիսկ քառօրյա պատերազմում մեր ժողովրդի ցուցաբերած միասնության, հերոսական սխրանքների ու հաղթանակի արդյունքում, պատերազմի սպառնալիքի պայմաններում նա անհամեմատ ավելի ժողովրդավարական երկիր է, քան այն պետությունը, որն անընդհատ սպառնալիք է հնչեցնում հայություն դեմ:

Անկախության 25 տարիների ընթացքում կառուցվեցին հայկական երկու անկախ պետությունների հիմքերը, կայացան ու աստիճանաբար զարգացման ուղին բռնեցին Հայաստանի գույգ անկախ հանրապետություններ՝ ՀՀ-ն և ԼՂՀ-ն: Նրանք դրական քայլեր են իրականացրել ժողովրդավարության, ազատ տնտեսության, քաղաքացիական հասարակության ստեղծման, ներքին կյանքի կայունության, խաղաղության ապահովման, մեր երկրի անվտանգության գլխավոր երաշխիքի՝ ազգային բանակի ստեղծման ու ամրապնդման, հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարելու և միջազգային հանրությանը ինտեգրվելու գործում: Պատմության համար ակընթաթ ի համարվող, իսկ մեր ժողովրդի համար երկար, բարդ ու ծանր փորձություններով լի քարոքող դարը եղավ կորուստների, փնտրտուքի, հաջողությունների և նվաճումների տարիներ: Այսօր ունենք կայացած պետական կառավարման համակարգ՝ ժամանակակից պետության բոլոր հատկանիշներով հանդերձ, ունենք ազգային բանակ որպես մեր ժողովրդի անվտանգության երաշխավոր և սեփական ռազմական արդյունաբերություն, որը մեր ժողովրդի հզորության ու երկրի պաշտպանության գրավականն է:

Պատահական չէ, որ 2016թ. սեպտեմբերի 21-ին ՀՀ անկախության 25 ամյակին նվիրված գորահանդեսի ժամանակ հանրապետության հրապարակով անցան հայկական արտադրության ռազմական հզոր տեխնիկան՝ զրահապատ մեքենաներ, անօդաչու թռչող սարքեր, ինչպես նաև խրոխտ շարքերով հայրենիքի պաշտպանները՝

աշխարհին ցուցադրելով իրենց մարտական պատրաստվածությունը, անկոտրուն կամքն ու ոգին: Այդ օրերին հայ ժողովուրդն ապրեց հպարտության հուզիչ պահեր՝ գալիքին նայելով վստահության և նորանոր հաղթանակներ կերտելու վճռականությամբ: Մեփական բանակի նկատմամբ հպարտությունը, խանդավառ տրամադրությունը իշխող էր նաև հայոց բանակի կազմավորման հոբելյանական օրերին՝ (2002, 2012 և 2017 հունվարի 28-ին): Իբրև անկախության ամենամեծ ձեռքբերում նշվեց հայոց ազգային բանակի կազմավորումը և նրա համաժողովրդական սխրանքներով ձեռք բերված հաղթանակը՝ ոչ միայն արցախյան պատերազմի առաջին փուլում՝ 1991-1994թթ., այլև երկրորդ փուլում՝ քառօրյա պատերազմի՝ 2016թ. ապրիլի 1-5 ընկած ժամանակահատվածում: Պատերազմի առաջին փուլում ոսխը ծանր պարտություն կրեց և 1994թ. մայիսի 12-ին Հայաստանի Հանրապետությունը, ԼՂՀ-ն և Ադրբեջանը ստորագրեցին հրադադարի պայմանագիր: Ադրբեջանի պարտությունը և ՀՀ և ԼՂՀ միացյալ զորքերի փառահեղ հաղթանակը միջազգային հանրության մոտ բարձրացրեցին Հայաստանի հեղինակությունը՝ որպես տարածաշրջանային գործոնի: Դա նաև դաս եղավ ադրբեջանական ագրեսորներին, որոնք ավելի քան քսան տարի չէին համարձակվում ձեռնարկել նոր ռազմական գործողություններ ընդդեմ հայության: Հայկական բանակը լինելով տարածաշրջանում ամենամարտունակ բանակը լուրջ փորձության ենթարկվեց 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ, որը Ադրբեջանը սանձազերծեց ԼՂՀ-ի դեմ՝ նպատակ ունենալով զենքով հոգուտ իրեն լուծել դարաբաղյան հիմնախնդիրը: Ադրբեջանական տխրահոչակ «բլիցկրիգը» (ակնթարթային պատերազմը) խայտառակ կերպով տապալվեց և փշրվեց՝ դեմ առնելով հայկական անսասան ժայռին: Քառօրյա պատերազմը կրկին հաստատեց տարածաշրջանում հայկական բանակի ամենամարտունակը լինելու իրողությունը, որը հաստատում են նաև օտարերկրյա պրոֆեսիոնալ ռազմական մասնագետները²⁸: Հայստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը ոչ միայն ռազմավարական դաշնակիցներ են, այլև ՀՀ-ն իբրև ռազմական գործոն կարևորում է անդամակցությունը հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությանը՝ ՆԱՊԿ-ին, որի հետ համատեղ պարբերաբար կազմակերպվում են

²⁸ Տե՛ս «Ազգ», 2016թ., ապրիլի 15:

գորավարժություններ, այդ թվում նաև Հայաստանի տարածքում: Հայաստանը ռազմական համագործակցություն է հաստատել նաև արևմտյան պետությունների, ՆԱՏՕ-ի հետ, ինչի սկիզբը դրվեց 1992թ., երբ ՀՀ-ն անդամակցեց Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդին (1997թ. վերանվանվել է Եվրատլանտյան գործընկերության խորհուրդ): Հաջորդ քայլը կատարվեց 1994թ, երբ ՀՀ-ն միացավ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին, որի շրջանակներում հայկական զինված ուժերը մասնակցում են ՆԱՏՕ-ի գորավարժություններին, որոնք անցկացվում են ոչ միայն եվրոպական երկրներում, այլև Հայաստանում: Այդ համագործակցության շրջանակները տարեցտարի ավելի են ընդլայնվում: Դրա վկայությունն այն է, որ 2004թ. ՀՀ-ն ՆԱՏՕ-ում ստեղծեց դիվանագիտական ներկայացուցչություն դեսպանի մակարդակով միացավ ՆԱՏՕ-ի «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրին»: Հայկական գործոնի նշանակությունը ավելի շեշտվեց, երբ հայկական զորամասերը սկսեցին մասնակցել ՆԱՏՕ-ի խաղաղապահ ուժերի առաքելություններին Կոսովոյում (2004թ), Իրաքում (2005թ), Աֆղանստանում (2010թ), Լիբանանում (2014թ.), փայլուն կերպով դրսևորելով իրենց և արժանանալով ՆԱՏՕ-ի հրամանատարության հիացմունքին²⁹: Փաստորեն ՀՀ-ն որդեգրել է երկու կողմերի Արևելքի և Արևմուտքի, այսինքն՝ Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի անդամ պետությունների միջև հավասարակշռված քաղաքականություն, որը ստացավ «կոմպլեմենտար» քաղաքականություն անվանումը, որի շնորհիվ ընդլայնվեց ՀՀ-ն, ԼՂՀ-ի և ամբողջ հայության անվտանգության դաշտը: Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ Հայաստանի ռազմական համագործակցությունը արևելյան և արևմտյան տերությունների հետ, հայ-ադրբեջանական երկու պատերազմներում հայկական կողմի տարած հաղթանակները, գալիս են հաստատելու, որ ՀՀ-ն որպես պետություն լուրջ ռազմական գործոն է, որը չի կարելի անտեսել:

20-րդ դարավերջի տասնամյակում հայ ժողովուրդը դարակազմիկ ձեռքբերումներ ունեցավ: Նա ոչ միայն վերականգնեց ու պաշտպանեց հայոց անկախ պետականությունը, ազատագրեց Արցախն ու ստեղծեց հայկական երկրորդ անկախ պետություն՝ ԼՂՀ-ն, այլև միջազգայնացրեց հայոց ցեղասպանության ճանաչման

²⁹ Տե՛ս Հայկական բանակ, 3(89) 2016, էջ 24:

հիմնախնդիրը: Հայոց պետության կայացմանը, նրա ռազմական գործուն և միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալը, վճռական նշանակություն ունեցավ հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում: Եթե մինչև Հայաստանի անկախացումը ցեղասպանությունը ճանաչել էին ընդամենը երեք պետություն՝ Ուրուգվայը, Կիպրոսը և Հայաստանի Հանրապետությունը, ապա անկախությունից հետո սկսվեց մի գործընթաց, որը կարելի է անվանել հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հաղթարշավ: Անկախության շրջանում հայոց ցեղասպանությունը ճանաչել են 28 պետություն, իսկ ընդամենը՝ 30 պետություն Եվրոպայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, Ասիայում, Ավստրալիայի, Բրազիլիայի, Կանադայի, Իսպանիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի և Շվեյցարիայի կազմի մեջ մտնող 16 ինքնավար կազմավորումներ, ԱՄՆ-ի 50 նահանգներից 44-ը³⁰:

Սկսած 1994թ.-ից, վերը թվարկված բարեփոխումների և ներդրումների շնորհիվ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է տարեկան միջին հաշվով 5.9% տնտեսական աճ, ըստ որում՝ 2001թ. գրանցվել է 9.6%, 2002թ.՝ 12.9%: 2009 թվականին, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով հանրապետության տնտեսության մեջ, հատկապես գյուղատնտեսության և շինարարության բնագավառում գրանցվել է տնտեսական ամենամեծ անկումը: Հետագա տարիներին հնարավոր եղավ ճգնաժամը աստիճանաբար հաղթահարել և ապահովել տնտեսական փոքրաթիվ աճ:

Ներկայումս զգալի միջոցառումներ են ձեռնարկվում տնտեսական կայուն աճ ապահովելու ուղղությամբ:

Անշուշտ, պետք է նշել, որ վերը նշված բարեփոխումները, բազմաթիվ ձեռքբերումների հետ մեկտեղ, ունեցան նաև բացասական հետևանքներ՝ ծնելով աղքատության ցածր մակարդակ, կոռուպցիա, պատերազմի վտանգ, օրինականության պակաս, արդարության անկում, բարոյական դեգրադացիա, սոցիալական բևեռացում, գործազրկություն և արտագաղթ, կախվածություն արտաքին ֆինանսական և տնտեսական կենտրոններից և շատ այլ թերություններ: Դրանք կարող են անխուսափելի թվալ հեռավոր ապագայից դիտարկելիս, առաջիկա տասնամյակների ընթացքում

³⁰ Տե՛ս «Հայկական բանակ», 3 (89), 2016, էջ 26:

այսօր տեսանելի թերություններ ու բացասական հետևանքները աստիճանաբար կարող են հաղթահարվել: Դրա հետ միասին ՀՀ-ն իր գոյության քսանհինգամյա ընթացքում, որը պատմական կարճ ժամանակահատված է, կարողացել է լուծել առանցքային բնույթի շատ խնդիրներ: Հայաստանի Հանրապետությունն այժմ արդեն կայացած արդիական պետություն է՝ իր սահմանադրությամբ, պետական կառուցվածքով, պետական, քաղաքական ու հասարակական մարմիններով, զինված ուժերով ընդունակ ապահովելու իր ժողովրդի ազգային անվտանգությունը: ՀՀ-ն վարելով փոխլրացման քաղաքականություն, անդամակցելով տարբեր միջազգային կազմակերպությունների՝ քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ բնույթի կառույցների, դարձել է միջազգային հանրության լիիրավ անդամ և իր արժանի տեղը գրավել արդի բարդ ու վտանգներով լի աշխարհում: ՀՀ-ն որպես կայացած պետություն, միջազգային և տարածաշրջանային ռազմական կարևոր գործոն, վայելում է միջազգային հանրության ճնշող մեծամասնության համակրանքն ու աջակցությունը համայն հայության համար դառնալով հուսալի վահան, որը վստահությամբ է նայում ապագային: Այսպիսով, տնտեսության փլուզման կասեցումը, երկրի պաշտպանունակության ամրապնդումը, հասարակական-քաղաքական կյանքի զարգացման և այլ բնագավառների ձեռքբերումները վկայում են անկախության ուղին որդեգրած մեր ժողովրդի անսպառ հնարավորությունների մասին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության անկախությունը ձեռք է բերվել արցախյան պատերազմով ծանրաբեռնված դժվարին սոցիալ-տնտեսական պայմաններում: Սակայն, 1991թ. սեպտեմբերի 21-ի ժողովրդի կամքը արտահայտած համաժողովրդական հանրաքվեն նշանավորեց զարգացման մի նոր փուլ, որն ամրագրվեց 1991թ. սեպտեմբերի 21-ի Անկախության Հռչակագրի ընդունումով: Աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվեց Հայաստանի երրորդ հանրապետությունը: Հայաստանի Հանրապետությունը ծնունդ առավ որպես ինքնիշխան պետություն, կայացած ժամանակակից պետություն, որպես միջազգային հանրության լիիրավ անդամ,

ինչպես նաև հայ-ադրբեջանական պատերազմում տարած հաղթանակի շնորհիվ, որպես տարածաշրջանում ռազմական գործոն:

Անփոփեյով արդեն քսանհինգ տարվա պատմությունը՝ անհրաժեշտ է ընդգծել ինքնուրույն զարգացման անատարկելի ձեռքբերումները. պետականության ձևավորումը և ազգային բանակի ստեղծումը: Անկասկած, հայ ժողովրդի աշխատասիրությունը և նրա աննկուն կամքը երկիրը կտանեն հառանկարային զարգացման լայն ուղիով:

Բանալի բառեր. անկախ պետականություն, երրորդ հանրապետություն, Արցախյան ազատագրական պայքար, արտաքին քաղաքականություն, հանրապետության նախագահ, խորհրդարան, ընտրություններ, կուսակցություններ:

25-ЛЕТНИЙ ПУТЬ НЕЗАВИСИМОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Эдик Минасян

*Доктор исторических наук, профессор,
Декан факультета истории ЕГУ*

РЕЗЮМЕ

Независимость Республики Армения приобреталась в тяжелых социально-экономических условиях, отягченных Арцахской войной. Однако воля народа, выраженная на всенародном референдуме 21 сентября 1991 года, положила начало новому этапу развития и была закреплена принятием Декларации Независимости 21 сентября 1991г. На политической карте мира появилась Третья армянская республика. Республика Армения состоялась как суверенное государство, состоявшееся современное государство, как полноценный член международного сообщества, а так же, во многом благодаря победе в азербайджано-армянской войне, как военный фактор в регионе.

Подводя итоги уже двадцатипятилетней истории, нужно отметить несомненные достижения независимого развития: становление государственности и национальной армии. Несомненно трудолюбие армянского народа и его неуклонная воля выведут страну на широкий и перспективный путь развития.

Ключевые слова: независимая государственность, третья республика, Арцахская освободительная борьба, внешняя политика, президент республики, парламент, выборы, партии.

25 YEAR'S WAY OF THE INDEPENDENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

Edik Minasyan

*Doctor of Historical Sciences, Professor,
Dean of the Faculty of History of YSU*

SUMMERY

The Independence of the Armenian Republic was gained through hard social and economic conditions, aggravated by the war in Artsakh. However, the will of the people, expressed in a national referendum on September 21, 1991, marked the beginning of a new development stage and was reinforced by the adoption of the Declaration of Independence. On September 21 of 1991, the Third Armenian Republic appeared on the political map of the world. The Republic of Armenia established itself as a sovereign state a successful modern state, and a full member of the international community, as Wellas, thanks to the victory in the Azerbaijani-Armenian war, as a military factor in the region.

Summing up the results of already twenty five years' history we should point at indisputable achievements of independent development - the formation of statehood and national army. And, undoubtedly, diligence and steady will of the Armenian people will bring the country to the wide and perspective way of development.

Key words: Independent statehood, the third republic, the Artsakh liberation struggle, foreign policy, the president of the republic, parliament, elections, parties.

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....	3
Գևորգ Պողոսյան- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 25 ՏԱՐԻՆ.....	4
Էդիկ Մինասյան- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՄԱՆՀԻՆԳԱՄՅԱ ՈՐԴԻՆ.....	15
Աշոտ Մելքոնյան- ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՓՈԽԻԼԵՐԸ	39
Քեարիկ Պետրոսյան- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	71
Կարեն Մկրտչյան- ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱՆԿԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ.....	86
Գաննիկ Մաֆայան- ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (պատմատեսական վերլուծություն)	101
Մարինե Գևորգյան- ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1991-2000 ԹԹ.	116
Աննա Ասատրյան- ԱՐԱՄ ՄԱԹՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՆԿԱՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ	127
Անահիտ Բաղդասարյան- ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԿԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՀ 25-ԱՄՅԱԿԻ ՆԱԽՕՐԵՆ (Ժողովրդական երաժշտության ձայնագրյալ ժողովածուների օրինակով).....	141
Տաթևիկ Շախկոյան- ԿՈՄԻՏԱՍԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ՔԱՌՈՐԴԴԱՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	149
Արուսյակ Պետրոսյան- ՕՀԱՆ ԴՈՒՐՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՄՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ	155
Լիլիթ Արտեմյան- ԼԵՎՈՆ ՉԱՈՒՇՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՆԿԱՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ	164
Արտաշես Բոչայան- ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XX Դ. ՎԵՐՋԻՆ ԵՎ XXI Դ. ՄԿԶՔԻՆ.....	171
Անահիտ Զիջյան, Ռոմիկ Քոչարյան- ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆՈՐԵՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԿԱՐԻՔԸ.....	177
Ներսես Քոչարյան- ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՐՈՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	192

СОДЕРЖАНИЕ

Предисловие	3
Геворг Погосян - РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 25 ЛЕТ	4
Эдик Минасян- 25-ЛЕТНИЙ ПУТЬ НЕЗАВИСИМОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ	15
Ашот Мелкоян - ЭТАПЫ РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ	39
Кнарик Петросян - ТРЕТЬЯ АРМЯНСКАЯ РЕСПУБЛИКА И ВЗАИМООТНОШЕНИЯ РОДИНА-ДИАСПОРА	71
Карен Мкртчян - ПОДДЕРЖКА АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ ИРАНА НОВОГО НЕЗАВИСИМОГО ГОСУДАРСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ	86
Гарник Сафарян - НАЦИОНАЛЬНАЯ ПРАВОВАЯ СИСТЕМА. ИСТОРИЯ И СОВРЕМЕННОСТЬ (исторический и теоретический анализ)	101
Марина Геворкян- ПРИВАТИЗАЦИЯ ЗЕМЛИ В РА В ПЕРИОД 1991-1993 ГГ	116
Анна Асатрян- ДЕЯТЕЛЬНОСТЬ АРАМА САТЯНА В ПЕРИОД НЕЗАВИСИМОСТИ РА	127
Анант Багдасарян - АРМЯНСКАЯ МУЗЫКАЛЬНАЯ ФОЛЬКЛОРИСТИКА ЗА ПОСЛЕДНИЕ 25 ЛЕТ (на примере нотированных сборников народной музыки)	141
Татевик Шахкулян - СОЗДАНИЕ МУЗЕЯ-ИНСТИТУТА КОМИТАСА В ДВАДЦАТИПЯТИЛЕТНЕМ ГОСУДАРСТВЕ	149
Арусяк Петросян - ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ ОГАНА ДУРЯНА В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ АРМЕНИИ	155
Лилиит Артемян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ЛЕВОНА ЧАУШЯНА В ПЕРИОД НЕЗАВИСИМОСТИ РА	164
Арташес Бояджян- СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ИЗМЕНЕНИЯ ШИРАКСКОГО МАРЗА В КОНЦЕ XX В. И В НАЧАЛЕ XXI В.	171
Анант Джиджян, Ромик Кочарян- ГОСУДАРСТВО И СОЦИАЛЬНО-ЗНАЧИМАЯ НУЖДА	177
Нерсес Кочарян- НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ РЕЛИГИОЗНОЙ СИТУАЦИИ В АРМЕНИИ	192

CONTENTS

Forword	3
Gevorg Poghosyan - 25 YEARS OF REPUBLIC OF ARMENIA	4
Edik Minasyan – 25 YEAR’S WAY OF THE INDEPENDENCE OF THE REPUBLIC OF ARMENIA	15
Ashot Melkonyan - THE HISTORICAL STAGES OF ARMENIAN STATEHOOD	39
Knarik Petrosyan - THIRD ARMENIAN REPUBLIC AND ARMENIA-DIASPORA RELATIONS	71
Karen Mkrtchyan - THE SUPPORT OF ARMENIAN COMMUNITY OF IRAN NEWLY INDEPENDENT STATE OF THE REPUBLIC OF ARMENIA	86
Garnik Safaryan - NATIONAL LAW SYSTEM. HISTORY AND MODERNITY (historical and theoretical analysis)	101
Marina Gevorgyan - LAND PRIVATIZATION IN RA DURING 1991-1993	116
Anna Asatryan - ARAM SATIAN’S CAREER IN THE YEARS OF INDEPENDENCE OF RA	127
Anahit Baghdasaryan - ARMENIAN MUSICAL STUDY OF FOLKLORE OVER THE PAST 25 YEARS	141
Tatevik Shakhkulyan - FOUNDATION OF THE KOMITAS MUSEUM-INSTIUTE IN THE QUARTER-CENTURY OLD STATE	149
Arusyak Petrosyan - THE LIFE AND THE WORK OF OHAN DURYAN DURING THE PERIOD OF ARMENIAN INDEPENDENCY	155
Lilit Artemyan - LEVON CHAUSHYAN’S CAREER IN THE YEARS OF INDEPENDENCE OF RA	164
Artashes Boyajyan - SOCIAL AND ECONOMIC CHANGES IN SHIRAK REGION AT THE END OF THE XX AND THE BEGINNING OF THE XXI CENTURIES	171
Anahit Jijyan, Romik Kocharyan - THE STATE AND THE SOCIAL SIGNIFICANT NEED	177
Nerses Khocharyan - SOME SPECIFIC FEATURES OF RELIGIOUS SITUATION IN ARMENIA	192